

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԵՍՈՅԱՆ ԳԵՎՈՐԳ ԷԴՈՒԱՐԴԻ

ՊԵՏԱԿԱՆ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՀՍԽՀ
ԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 1921-1934 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2019

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Վիրաբյան Ա.Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մանուկյան Ա.Ս.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Սուքիասյան Հ.Կ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական պետական
մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019 թ. հունիսի 18-ին,
Ժամը 14⁰⁰-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի Հայոց
պատմության 004 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թ. մայիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Խորհրդային ժամանակաշրջանը, լինելով և՛ մեծ ձեռքբերումների ու զարգացման, և՛ կոպիտ սխալների, բացթողումների ու կորուստների շրջան, լեցուն է բարդ ու հակասական հիմնախնդիրներով, որոնք անկողմնակալ ուսումնասիրության կարիք ունեն: Այս ուղղությամբ խորհրդային տարիներին իրականացված աշխատանքները, բնականաբար, կատարվել են գաղափարախոսական կաշկանդվածության պայմաններում և մեծ մասամբ նպատակ են ունեցել ոչ այնքան բացահայտելու երևույթների ու իրադարձությունների օրինաչափություններն ու առանձնահատկությունները, որքան սրբագործելու տիրող կարգերը և տեսնելու կատարվածի համապատասխանությունը ընդունված գաղափարախոսությանը: Հետխորհրդային առաջին տարիներին նկատվում էր Խորհրդային Հայաստանի պատմության ուսումնասիրության նկատմամբ հետաքրքրության անկում: Ներկայումս այդ ժամանակաշրջանին վերաբերող շատ հիմնահարցեր նորովի, գիտական նոր մոտեցումներին համապատասխանող ուսումնասիրության կարիք են զգում:

Խնդիրն ավելի բարդ է մեր կողմից ուսումնասիրվող թեմայի պարագայում: Հետխորհրդային շրջանում որևէ աշխատանք այս ուղղությամբ չի կատարվել, իսկ խորհրդային շրջանում կատարվածները խիստ սակավաթիվ են և չունեն բազմակողմանի ընդգրկում: Ճիշտ է՝ անկախության շրջանում ձևավորված պատմագիտության մեջ բացարձակ ընդունելի է խորհրդային հասարակարգում տեղի ունեցող իրադարձությունների ամբողջական-կատարյալ վերահսկողության հանգամանքը, սակայն քննության չեն առնվել այդ վերահսկողության իրականացման եղանակները, օգտագործված մեթոդները, հետապնդած նպատակները և այլ հարցեր: Ուստի առաջին անգամ կատարվում է խնդրի բազմակողմանի ուսումնասիրություն՝ զերծ մնալով տարատեսակ աչառու մոտեցումներից:

Թեմայի արդիականությունը սերտորեն կապված է Հայաստանի Հանրապետությունում ծավալվող ներքին իրադարձությունների հետ: Տեղի ունեցող ներքին ծավալուն փոփոխությունները, կարծում ենք, պետք է զուգակցվեն հստակ գործող վերահսկողության հետ, որը կապահովի անցման սահունությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության նպատակն է արխիվային առատ նյութի, տպագիր ժողովածուների և այլ աղբյուրների օգտագործմամբ ուսումնասիրելու Խորհրդային Հայաստանի պետական և կուսակցական վերահսկողության մարմինների տեղն ու դերը իշխանական համակարգում, նրանց գործունեությունը 1921-1934 թթ.: Այս

նպատակով մեր առջև խնդիր ենք դրել ատենախոսության մեջ քննության ենթարկել հետևյալ հարցերը.

- Վերահսկողության մարմինների կազմավորման գործընթացը և հայեցակարգային մոտեցումները Խորհրդային Ռուսաստանում,

- Վերահսկողության մարմինների բնույթը և նրանց լիազորությունների աստիճանական ընդարձակման գործընթացը,

- Պետական և կուսակցական վերահսկողության համակարգը Խորհրդային Հայաստանում, նրա գործունեության նպատակներն ու շրջանակները,

- Պետական և կուսակցական վերահսկողության մարմինների միավորումը, դրա դրդապատճառները և առաջացած ձևաբովանդակային հակասությունը,

- Պետական վերահսկողության մարմնի կողմից իրեն վերապահված պետական համակարգը բարելավելու գործառույթի գործադրումը և հարաբերությունները մյուս ժողովրդական կոմիսարիատների հետ,

- Պետական և կուսակցական վերահսկողության ժողկոմատի կառուցվածքային փոփոխությունները և նոր ենթակառուցվածքների ստեղծումը որպես վերահսկողական աշխատանքները բարելավող միջոցներ,

- Պետությունում գործադրվող տնտեսական քաղաքականության և վերահսկողության մարմինների առաջ դրվող խնդիրների կապը,

- Պետական և կուսակցական վերահսկողությունը որպես օրինականությունը հսկող օղակ,

- Պետական և կուսակցական վերահսկողության ժողկոմատը որպես աշխատավորների առաջըջանը և սերնդափոխությանը նպաստող մարմին,

- Պետական և կուսակցական վերահսկողության մարմինների փաստացի գործունեությունը,

- Աշխատավորներին վերահսկողական աշխատանքներում ներգրավելը,

- Պետական և կուսակցական վերահսկողության մարմինների տեղական ներկայացուցչությունների և օժանդակող մարմինների դերը վերահսկողական աշխատանքներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ

ՀԻՄՔԸ:

Ուսումնասիրությունը կատարել ենք սկզբնաղբյուրների և գրականության պատմաքննական, պատմահամեմատական, պատմավերլուծական մեթոդների հիման վրա, որոնք ենթադրում են փաստական նյութի և պատմական իրադարձությունների խոր ու բազմակողմանի քննական վերլուծություն՝ դրանից բխող համապատասխան եզրակացություններով: Ուսումնասիրության ընթացքում ղեկավարվել ենք պատմական ճշմարտության, պատմականության և անաչառության մեթոդաբանական սկզբունքներով՝ զերծ մնալով գաղափարական նախապաշարմունքներից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ:

Ուսումնասիրության հիմնական նյութի ժամանակագրական շրջանակը

ընդգրկում է 1921-1934 թթ.՝ Հայաստանի խորհրդայնացումից մինչև պետական-կուսակցական վերահսկողության ժողովրդատի գործունեության դադարեցումը և ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին ու ՀԿ(Բ)Կ Կենտկոմին կից պետական և կուսակցական առանձին գործող վերահսկողության հանձնաժողովների ստեղծումը: Խորհրդային Հայաստանի վերահսկողության մարմինների նպատակների և ունեցած դերի ամբողջական ըմբռնման համար ներկայացրել ենք նաև այդ մարմինների ձևավորման և զարգացման գործընթացը Խորհրդային Ռուսաստանում 1917-1922 թթ. ընթացքում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Անկախության շրջանում առաջին անգամ փորձ է արվում նորահայտ բազմաթիվ սկզբնաղբյուրային նյութերի օգտագործմամբ և գիտական սկզբունքների պահպանմամբ քննելու պետական և կուսակցական վերահսկողության մարմինների գործունեությունը 1921-1934 թթ.՝ պարզելով պետական իշխանական համակարգում դրանց տեղը, նպատակները, դրանց առջև դրված խնդիրների, գործունեության ոլորտների և կառուցվածքային փոփոխությունների պատճառահետևանքային կապը:

Թեմայի քննարկումն ունի կիրառական-գործնական կարևոր նշանակություն: Առաջին հերթին այն կարևորվում է ՀՀ-ում ներկայումս տեղի ունեցող ներքին փոփոխությունների և պետական վերահսկողության մարմնի՝ Պետական վերահսկողության ծառայության վերջերս կազմավորված լինելու համատեքստում: Ատենախոսության շրջանակներում ներկայացվում են վերահսկողության իրականացման նոր մոտեցումներ, եղանակներ ու մեթոդներ, որոնք կարող են իրենց նպաստն ունենալ ներկայիս վերահսկողության համակարգը կատարելագործելու գործում: Սա, իհարկե, չի նշանակում, որ պետք է կրկնօրինակվի նախկինը, այլ այն, որ այդ մոտեցումները կարող են համադրվել ներկայումս ՀՀ-ում, ինչպես նաև այլ երկրներում կենսագործվող վերահսկողական մոտեցումների հետ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի մշակել վերահսկողական համակարգի առաջընթացն ապահովող նոր սկզբունքներ:

Թեմայի քննարկումն օրինակ է տալիս մշակված պետական կառավարման տեսությունը (խոսքը միայն խորհրդային մոդելի մասին չէ, այլ ընդհանրապես պետական կառավարման վերաբերյալ ցանկացած տեսության) գործնականացնելու միջոցների մասին: Պետական կառավարման մոդելը, անշուշտ, իր առարկայական արտահայտությունն է գտնում ընդունված օրենքների, որոշումների և իրավական այլ ակտերի մեջ: Վերջիններիս ժամանակին և ճշգրիտ գործադրման վերահսկողությունը կնպաստի ընդհանուր մոդելի կենսագործմանը:

Ատենախոսության գործնական կարևոր նշանակությունը նաև այն է, որ տալիս է պետության և հասարակ ժողովրդի միջև կապի օրինակ: Խորհրդային Հայաստանում վերահսկողության մարմինների միջոցով պետական կառավարման համակարգում ներգրավվում էին հասարակ ժողովրդի շարքերից

դուրս եկած անձինք (ճիշտ է, համապատասխան մտածողությամբ «դաստիարակվելուց» հետո), ինչպես նաև պետությունում անցկացվող քաղաքական գծի մասին տեղեկացնելով այդ նույն ժողովրդին՝ փորձ էր արվում այն դարձնել բոլորի կողմից ընդունելի:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից: Բննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի վեց հոդվածներում:

ՀԵՏԱՀՈՏՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Ուսումնասիրությունը պատշաճ մակարդակով կատարելու համար փորձել ենք օգտվել հնարավոր բոլոր աղբյուրներից: Օգտագործել ենք արխիվային վավերագրերը, տպագիր փաստաթղթերի և նյութերի ժողովածուները, ՀՍԽՀ կառավարության և պետական-կուսակցական վերահսկողության ժողկոմատի հաշվետվությունները, ՀԿ(բ)Կ համագումարների նյութերը, խորհրդային շրջանում գրված սակավաթիվ մենագրություններն ու հոդվածները, ժամանակի մամուլում հրատարակված տեղեկությունները և այլն:

Սկզբնաղբյուրների շարքում առաջնային կարևորություն ունեն Հայաստանի ազգային արխիվում պահվող վավերագրերը: Հայաստանի ազգային արխիվում մեր կողմից ուսումնասիրվող թեմայի վերաբերյալ առկա է հարուստ նյութ, որն ամփոփված է տարբեր ֆոնդերում ընդգրկված մոտավորապես 7000 արխիվային գործի շրջանակներում, որոնցից ուսումնասիրել ենք շուրջ 2500-ը: Վերջիններից առանձնացրել և մեր ատենախոսության մեջ օգտագործել ենք ութ ֆոնդերում ընդգրկված 135 արխիվային գործերում պահվող մոտ 350 փաստաթուղթ, որոնց մեծ մասը օգտագործվում է առաջին անգամ: Դրանք

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1 (ՀԿԿ Կենտկոմ), ց. 1, գ. 93; ց. 5, գ. 262; ց. 17, գ. 126; ց. 19, գ. 212; ֆ. 81 (Հայաստանի ՇՎՀ-ԲԳՏ-ներ), ց. 1, գ. 22; ց. 2, գ. 167; ց. 4, գ. 35; ց. 9, գ. 28; ց. 13, գ. 21; ց. 19, գ. 95, 115; ֆ. 91 (ՀամԿ(բ)Կ Կենտկոմին կից կուսվերահսկողության հանձնաժողովի Հայաստանի գծով կուսկոլլեգիա), ց. 2, գ. 1, 1բ, 2ա, 2բ, 4ա, 19, 21, 25, 63, 102, 125, 135, 161, 440; ֆ. 112 (ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտե), ց. 1, գ. 597; ֆ. 113 (ՀՀ կառավարություն), ց. 2, գ. 743; ց. 3, գ. 193, 194, 196; ց. 39, գ. 966; ֆ. 128 (ՀԽՍՀ բանվորագյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատ), ց. 1, գ. 1, 2, 3, 5, 8, 12, 13, 20, 25, 27, 35, 38, 40, 42, 45, 48, 50, 55, 57, 60, 63, 66, 72, 75, 77, 79, 85, 88, 90, 92, 93, 96, 101, 103, 105, 106, 108, 114, 119, 122, 127, 132, 135, 138, 143, 150, 191, 193, 195, 202, 237, 278, 283, 286, 300, 313, 325, 326, 332, 358, 377, 380, 382, 415, 417, 440, 444, 470, 479, 504, 505, 510, 535, 605, 643, 676, 765, 771, 1067, 1090, 1094, 1206, 1207, 1208, 1210, 1216, 1272, 1652, 1669, 1672, 1706, 1755, 1762, 2205, 2225, 2229, 2253, 2833; ց. 2, գ. 7, 16, 20, 46; ֆ. 129 (ՀԽՍՀ բանվորագյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատին կից խորհրդային

դեկրետներ, որոշումներ, հրահանգներ, կանոնադրություններ, արձանագրություններ, շրջաբերականներ, դիմումներ, զեկուցագրեր, հեռագրեր են, որոնք վկայություններ են պետական և կուսակցական վերահսկողության մարմինների կազմավորման, վերակառուցման, որպես ժողովմատ վերացման, տեղական ներկայացուցչությունների և օժանդակ մարմինների, պետական և կուսակցական վերահսկողության մարմինների նպատակների, առաջադեպ խնդիրների, ծավալած գործունեության, այլ մարմինների հետ ունեցած հարաբերությունների և վերահսկողության գործընթացին վերաբերող այլ հարցերի մասին: Ընդ որում՝ չորս ֆոնդեր (81, 91, 128, 129) ամբողջությամբ նվիրված են պետական և կուսակցական վերահսկողության մարմիններին:

Օգտագործված սկզբնաղբյուրների մեջ հաջորդ բազմաքանակ խումբը տպագիր ժողովածուներն են: Խորհրդային համակարգի մասին տեսական պատկերացում կազմելու համար կարևոր նշանակություն ունի Վ. Լենինի «Երկերի լիակատար ժողովածու» բազմահատորյակը²: Այստեղ հավաքված են տարբեր խնդիրների վերաբերյալ Լենինի տեսակետներն ու մեկնաբանությունները, որոնք, բնականաբար, ուղենիշ էին Խորհրդային Միությունում: Այս ժողովածուում վերահսկողության մասին տեղ գտած հոդվածներն ու նյութերը վերահսկողության մարմինների գործունեության քննության հետ համատեղ հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հատկապես վերահսկողության մարմինների նպատակների և դերի մասին:

Խորհրդային Ռուսաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցության, իսկ ԽՍՀՄ-ի կազմավորումից հետո, Համամիութենական կոմունիստական (բանվորական) կուսակցության՝ քննարկվող խնդրի վերաբերյալ ունեցած դիրքորոշումը, որը ելակետային էր ինչպես ամբողջ միության, այնպես էլ միութենական հանրապետություններում գործողություններ ծավալելու համար, արտահայտվում է կուսակցության համագումարներում, կոնֆերանսներում, Կենտրոնական կոմիտեի լիագումար նիստերում ընդունված որոշումներում և բանաձևերում: Այդ նյութերը հավաքված են «ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում» ժողովածուում³, որտեղ վերահսկողության մարմինների մասին

ապարատի գտման հանրապետական հանձնաժողով), ց. 1, գ. 1760; ֆ. 1253 (Հայաստանի հեղափոխական կոմիտե), ց. 1, գ. 9:

² Տե՛ս Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ), հ. 34, Երևան, 1981; հ. 35, Երևան, 1981; հ. 37, Երևան, 1981; հ. 42, Երևան, 1982; հ. 43, Երևան, 1982; հ. 44, Երևան, 1982; հ. 45, Երևան, 1983; հ. 50, Երևան, 1983, հ. 52, Երևան, 1983; հ. 53, Երևան, 1983; հ. 54, Երևան, 1983:

³ Տե՛ս ՍՄԿԿ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում (այսուհետև՝ ՍՄԿԿ-ն ... որոշումներում), հ. 2, Երևան, 1986; հ. 3, Երևան, 1987, հ. 4, Երևան, 1987; հ. 5, Երևան, 1989; հ. 6, Երևան, 1989:

առկա ամբողջ նյութը մեր կողմից ենթարկվել է քննության և օգտագործվել ատենախոսության շարադրման ընթացքում:

Ատենախոսության թեմայի համար մեծ կարևորություն ունեն պետական կառավարման բարձրագույն մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը: 1921 թ. հրատարակվում է «Դեկրետների յեվ հրամանների ժողովածու»-ն, որը բաղկացած է 2 հատորից⁴: Առաջին հատորում տեղ են գտել Հայաստանի խորհրդայնացումից մինչև Փետրվարյան ապստամբության բռնկումն ու Երևանի գրավումն ընկած ժամանակահատվածում, իսկ երկրորդում՝ ապստամբության ճնշումից մինչև օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում ընդունված իրավական ակտերը: Այս ժողովածուում, ի թիվս այլ դեկրետների, որոշումների, հրահանգների, առկա են նաև Բանվորա-գյուղացիական տեսչության կազմավորման մասին դեկրետը, Բողոքների բյուրո ձևավորելու վերաբերյալ որոշումը և այլ ակտեր:

1921 թ. կեսերից Խորհրդային Հայաստանի կառավարման բարձրագույն մարմինների ընդունած իրավական ակտերն սկսեցին հրատարակվել ամեն ամիս լույս տեսնող «Դեկրետների յեվ վորոշումների հավաքածու»-ներում⁵, ապա «Որենքների յեվ կարգադրությունների ժողովածու»-ներում⁶: Դրանցում հրատարակված ակտերից մեր թեմային են վերաբերում ԲԳՏ կանոնադրությունը, ԲԳՏ սեկցիաների ստեղծման որոշումներն ու հրահանգները, ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմների նշանակման-ազատման մասին որոշումները, ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի վերացման մասին որոշումը և այլն: Օգտագործել ենք նաև ԱՍԴԽՀ «Որենքների յեվ որոշումների հավաքածու»-ներում⁷ տպագրված, մեր թեմային վերաբերող իրավական ակտերը:

ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի ծավալած գործունեության մասին տեղեկություններ ենք ստանում նրա տված հաշվետվություններից: Հայաստանի ազգային արխիվում պահվող հաշվետվությունների նյութերից բացի՝ օգտագործել ենք նաև հրապարակված և տպագրված հաշվետվությունները: Այս շարքում ընդգրկված են կառավարության հաշվետվությունները, որոնցում, ի թիվս մյուս ժողկոմատների գործունեությանը, համառոտ կերպով ներկայացվում է նաև ԲԳՏ

⁴ Տե՛ս ՀՄԽՀ «Դեկրետների յեվ հրամանների ժողովածու», պրակ I, էջմիածին, 1921: պրակ II, էջմիածին, 1921:

⁵ Տե՛ս ՀՄԽՀ «Դեկրետների յեվ վորոշումների հավաքածու», N 9, Երևան, նոյեմբեր-դեկտեմբեր 1923: N 9, մայիս-հունիս 1924:

⁶ Տե՛ս ՀՄԽՀ «Որենքների յեվ կարգադրությունների ժողովածու», Բաժին II, N 1, Երևան, հունվար-մարտ 1929: Բաժին I, N 6, հունիս 1929: N 2, ապրիլ-հունիս 1931: N 4, ապրիլ 1934:

⁷ Տե՛ս ԱՄՖԽՀ «Որենքների յեվ վորոշումների հավաքածու», մաս Առաջին, N 5, Թիֆլիս, 6 սեպտեմբեր 1923: N 1, 25 փետրվար 1924:

գործունեությունը⁸: Առավել ընդգրկուն են ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմ Աղասի Գալոյանի կողմից կազմված և առանձին գրքուկով հրատարակված հաշվետվությունները⁹: Դրանցում, բացի ԲԳՏ գործունեությունից, ներկայացվում է նաև ԿՎՀ գործունեությունը: ԿՎՀ, ապա ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ էին ներկայացվում նաև ՀԿ(Բ)Կ համագումարներում, որտեղ վերջինների վերաբերյալ ընդունվում էին համապատասխան որոշումներ և ուղեգծվում էին ԿՎՀ-ԲԳՏ առաջիկա գործունեության ուղղությունները¹⁰:

ԽՍՀՄ-ում պետական և կուսակցական վերահսկողության մարմինների զարգացման ընթացքը ներկայացվում էր խորհրդային շրջանում կազմված մի շարք փաստաթղթերի ժողովածուների միջոցով: Ատենախոսության մեջ օգտագործել ենք «Деятельность органов партийно-государственного контроля по совершенствованию государственного аппарата»¹¹ և «Народный контроль в СССР»¹² ժողովածուները: Առաջին ժողովածուն ունի յոթ տարվա՝ 1923-1929 թթ., ժամանակագրական ընդգրկում և պարունակում է փաստաթղթեր՝ ԽՍՀՄ ԲԳՏ-ԿՎՀ կազմավորման, կանոնադրության, ՀամԿ(Բ)Կ համագումարներում վերահսկողության մարմինների վերաբերյալ ընդունված որոշումների, տեղական և միութենական վերահսկիչ հանձնաժողովների և այլ հարցերի մասին: Երկրորդ ժողովածուն, բացի ԽՍՀՄ-ին վերաբերող փաստաթղթերից, ընդգրկում է նաև Խորհրդային Ռուսաստանում 1917-1922 թթ. ընթացքում վերահսկողության մարմինների զարգացման ընթացքին վերաբերող փաստաթղթեր:

Թեմայի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունները և տպագրված աշխատանքները խիստ սակավաթիվ են: Դրանցից մեկը Արշավիր Հակոբյանի

⁸ Տե՛ս Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920-1922 թթ. հաշվետվություն, Յերևան, 1923, էջ 224; Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1922-1923 թթ. հաշվետվություն, Յերևան, 1925; ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր 1926/27 յեվ 1927/28 թթ., Յերևան, 1929, էջ 357; ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր 1928/29-1929/30), Յերևան, 1931, էջ 208:

⁹ Տե՛ս Գալոյան Ա., ԿՎՀ-ԲԳՏ հաշվետվությունը: Զեկուցում ՀԿ(Բ)Կ VIII համագումարում (այսուհետև՝ ԿՎՀ-ԲԳՏ հաշվետվությունը), Յերևան, 1932; Նույնի, ՀԿ(Բ)Կ կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը ՀԿ(Բ)Կ IX համագումարում, Յերևան, 1934:

¹⁰ Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության 4-րդ համագումարի բանաձևերը, Յերևան, 1926; ՀԿ(Բ)Կ 7-րդ համագումարի որոշումները, Յերևան, 1930; Հայաստանի կոմունիստական (բալշևիկների) կուսակցության 8-րդ համագումարի բանաձևերը, Յերևան, 1932; ՀԿ(Բ)Կ IX համագումարի տպագրական հաշվետվություն, Յերևան, 1935:

¹¹ Տե՛ս Деятельность органов партийно-государственного контроля по совершенствованию государственного аппарата: (от XII до XVI съезда партии), сборник документов (այսուհետև՝ Деятельность органов), Москва, 1964.

¹² Տե՛ս Народный контроль в СССР, Москва, 1967.

աշխատությունն է¹³։ Դրանում հեղինակը ներկայացրել է ԲԳՏ-ի՝ որպես ժողկոմատի գործունեության ողջ ժամանակահատվածը։ Աշխատության մեջ հիմնական շեշտադրումն արված է վերահսկողության մարմինների վերաբերյալ լենինյան գաղափարների և այդ մարմինների կատարած ստուգումների ներկայացման վրա։ Ինչպես հեղինակն ինքն է խոստովանում «աշխատությունը չի ընդգրկում ԿՎՀ-ԲԳՏ օրգանների բազմակողմանի և բազմաբովանդակ գործունեությունը»¹⁴։ Օգտագործել ենք նաև Ա. Հակոբյանի «Կուսակցական-պետական վերահսկողության լենինյան պլանը և նրա կենսագործումը» հոդվածը¹⁵, որտեղ քննարկվում են այդ մարմինների ձևավորման տեսական մոտեցումներն ու գործնական քայլերը։

Խորհրդային շրջանում թեմայի ուսումնասիրությամբ զբաղվել է Շահեն Պողոսյանը, ով 1970 թ. այդ թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, իսկ 1978 թ. հրատարակել «Լենինյան վերահսկողությունը գործողության մեջ»¹⁶ աշխատությունը։ Նախորդ հեղինակի հետ համեմատած՝ Շ. Պողոսյանը կատարել է ավելի բարեխիղճ աշխատանք, բայց նրա ուսումնասիրությունը ևս ունի գաղափարական կաշկանդվածություն, չի քննարկում պետական և կուսակցական վերահսկողության մարմինների ձևավորմանն ու զարգացմանը վերաբերող բազմաթիվ հարցեր, չի վերլուծում կատարվող փոփոխությունների պատճառահետևանքային կապը։ Աշխատանքում առկա են նաև սխալներ և հակասական շարադրանքի հատվածներ։

Օգտագործել ենք նաև Շ. Պողոսյանի «Органы партийного и государственного контроля ЗСФСР в борьбе за победу социализма в 1922-1937 гг.»¹⁷ աշխատությունը։ Այստեղ քննարկվում է ԱՍԴԽՀ ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատի գործունեությունը՝ նրա գոյության ամբողջ ժամանակահատվածում։ Կարևորել ենք հատկապես այն հատվածները, որոնք վերաբերում են Անդրկովկասի երեք հանրապետություններում ԲԳՏ ինքնուրույն ժողկոմատի վերացմանը և ԱՍԴԽՀ ԲԳՏ հանրապետական լիազորությունների ստեղծմանը։

Օգտագործել ենք նաև Շ. Պողոսյանի հեղինակած չորս հոդվածներ, որոնցում քննարկման առարկա են դարձել պետական վերահսկողության ձևավորման գործընթացը, «թեթև հեծելազորի» ձևավորման, հետապնդած նպատակներին, ծավալած գործունեությանը վերաբերող տարբեր հարցեր,

¹³ Տե՛ս Հակոբյան Ա., Հայաստանի Բանգյուղտեսչությունը սոցիալիզմի համար մղված պայքարում (1920-1934 թթ.), Երևան, 1974։

¹⁴ Նույն տեղում, էջ 22։

¹⁵ Տե՛ս Հակոբյան Ա., Կուսակցական-պետական վերահսկողության լենինյան պլանը և նրա կենսագործումը, «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, N 4, Երևան, 1970

¹⁶ Տե՛ս Պողոսյան Շ., Լենինյան վերահսկողությունը գործողության մեջ, Երևան, 1978։

¹⁷ Տե՛ս Погосян Ш., Органы партийного и государственного контроля ЗСФСР в борьбе за победу социализма в 1922-1937 гг., Ереван, 1986.

գյուղատնտեսության կոլեկտիվացման գործընթացում ԿՎՀ-ԲԳՏ ունեցած դերը, վերահսկողության մարմինների կատարած ստուգումները¹⁸:

Մեր կողմից հետազոտվող թեմային մասամբ վերաբերում են Մանուկ Մանուկյանի «Վերահսկում է ժողովուրդը»¹⁹և Վիկտոր Դավաթյանի «Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունից (1920-1930-ական թվականներ)»²⁰աշխատությունները: Առաջինում ներկայացվում է Խորհրդային Ռուսաստանում և Խորհրդային Հայաստանում պետական և կուսակցական վերահսկողության մարմինների ձևավորման, դրանց միավորման գործընթացը, իսկ երկրորդում՝ ԿՎՀ-ԲԳՏ աշխատանքներում բանվորների ներգրավման հարցը:

Օգտագործել ենք նաև «История государства и права Советской Армении»²¹ աշխատությունը, որի երկու ենթագլուխ նվիրված է Հայաստանի ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատին: Այդ ենթագլուխներում քննարկվում են Բանգյուղտեսչության ժողկոմատի կազմավորման, նրա նպատակներին ու խնդիրներին, Բողոքների բյուրոյի նշանակության, ժողկոմատի ծավալած գործունեության և այլ հարցերի վերաբերյալ բազմաթիվ խնդիրներ:

Թեմայի վերաբերյալ արծարծումներ կան Սամվել Ալիխանյանի, Շահեն Պետրոսյանի, Արտաշես Հայրապետյանի, Արշավիր Հակոբյանի, Շմավոն Հարությունյանի, Վլադիմիր Ղազախեցյանի, Վլադիմիր Նազարյանի և այլ հեղինակների աշխատություններում, որոնց հարկ չենք համարում անդրադառնալ մանրամասնորեն այդ արծարծումների ոչ նշանակալի լինելու պատճառով²²:

¹⁸ Տե՛ս Պողոսյան Շ., Բանգյուղտեսչությունը Հայաստանում սովետական իշխանության առաջին տարում (1921 թ.) (այսուհետև՝ Բանգյուղտեսչությունը Հայաստանում ...), «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագիր, N 3, Երևան, 1965; նույնի, «Թեթև հեծելազոր»-ը որպես աշխատավոր երիտասարդության վերահսկողության ձև Հայաստանում առաջին հնգամյակի տարիներին (այսուհետև՝ «Թեթև հեծելազոր»-ը ...), Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու» ամսագիր, հտ. 24, Հասարակական գիտությունների սերիա, թողարկում N 1, Երևան, 1966; նույնի, ԿՎՀ-ԲԳՏ-ն և կոլտնտեսային շինարարությունը Հայաստանում (1927-1934 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, N 1, Երևան, 1973; նույնի, Ленинский партийно-государственный контроль в Армении в 1923-1925 гг. (այսուհետև՝ Ленинский партийно-государственный контроль ...), Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Գիտական աշխատությունների ժողովածու» ամսագիր, հտ. 28, Հասարակական գիտությունների սերիա, թողարկում N 3, Երևան, 1970:

¹⁹ Տե՛ս Մանուկյան Մ., Վերահսկում է ժողովուրդը, Երևան, 1971:

²⁰ Տե՛ս Դավաթյան Վ., Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունից (1920-1930-ական թվականներ), Երևան, 1991:

²¹ Տե՛ս История Государства и права Советской Армении, книга первая, Ереван, 1974:

²² Տե՛ս Ալիխանյան Ս., Պետական կառավարման լենինյան սկզբունքները, Երևան, 1978; Պետրոսյան Շ., Սովետական պետականության հաստատումը և ամրապնդումը

Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդային Միության վերահսկողության մարմինների պատմության ուսումնասիրությանն է նվիրված Գալինա Դորոխովայի «Рабоче-крестьянская инспекция 1920-1923 гг.» և Բագրատ Բորյանի «Государственный контроль в Союзе ССР и Западной Европе» աշխատությունները²³:

Հետխորհրդային շրջանում վերահսկողության մարմինների գործունեության ուսումնասիրման ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվում Ռուսաստանի Դաշնությունում: Պաշտպանվող ատենախոսությունների²⁴ կողքին հրատարակվում են բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք քննարկում են Ռուսաստանի տարբեր երկրամասերի վերահսկողության մարմինների գործունեությանը վերաբերող զանազան հարցեր²⁵:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք նաև Խորհրդային Վրաստանում ԿՎՀ-ԲԳՏ գործունեությունը ներկայացնող Դևի Ստուրուայի «В борьбе за единство рядов партии: деятельность ЦКК-РКИ Грузии (1924-1934 г.)»²⁶ աշխատությունը, որտեղ նախ ներկայացվում է վերահսկողության համակարգի ձևավորումը Խորհրդային Ռուսաստանում, ապա քննարկման

Հայաստանում (1920 թ. նոյեմբեր-1922 թ. փետրվար), Երևան, 1958; Հայրապետյան Ա., Սոցիալիզմի կառուցումը և կադրերի պատրաստումը Հայաստանում, Երևան, 1974, Հակոբյան Ա., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925 թթ.), Երևան, 1955; Հարությունյան Շ., Սովետական Հայաստան: Տարեգրություն, 1920-1980, Երևան, 1982; Ղազախեցյան Վ., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929, Երևան, 1975; Նազարյան Վ., Սովետական Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինները (1920-1922), Երևան, 1974, Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1963 և այլն:

²³ Տե՛ս Дорыхова Г., Рабоче-крестьянская инспекция 1920-1923 гг., Москва, 1959; Борьян Б., Государственный контроль в Союзе ССР и Западной Европе, Москва, 1928.

²⁴ Տե՛ս Голотов Д., Организационно-правовые основы возникновения и деятельности Рабоче-крестьянской инспекции в Советском государстве в 1918-1923 гг., диссертация, Краснодар, 2005; Терещук С., Становление и развитие органов государственного контроля в РСФСР-СССР (1917-1934 гг.), диссертация, Москва, 2005.

²⁵ Տե՛ս Юдин К., Внутрипартийный контроль в СССР 1930 – начала 1940-х гг.: идейно-институциональный облик, Иваново, 2015; Иванцов И., Некоторые вопросы Кубани в документах комиссий внутрипартийного контроля ВКП(б) (1920-е - начало 1930-х гг.), Краснодар, 2012; նույնի, Некоторые методы партийно-государственного управления в СССР в 1920-1934 гг. (на материалах Кубани), Научный вестник ЮИМ, N 1, Москва, 2018; նույնի, Некоторые инструменты партийно-государственного контроля советского общества 1920-х – начала 1930-х гг., Международный журнал прикладных и фундаментальных исследований, Москва, N 6-2, 2015.

²⁶ Տե՛ս Стурца Д., В борьбе за единство рядов партии: деятельность ЦКК-РКИ Грузии (1924-1934 гг.), Тбилиси, 1972.

հիմնական առարկա է դարձվում Խորհրդային Վրաստանի ԿՎՀ-ԲԳՏ գործունեությունը:

Օգտագործել ենք նաև Խորհրդային շրջանում Ա. Աբաջյանի Եղիշե Ասձատրյանի Լև Տրոցկու հրատարակած հոդվածները, որոնցում քննարկվում են պետական և կուսակցական վերահսկողության մարմինների ձևավորմանն ու գործունեությանը վերաբերող տարբեր հարցեր²⁷:

Ուսումնասիրության ընթացքում օգտագործել ենք նաև ժամանակի պարբերական մամուլում՝ «Կոմունիստ», «Խորհրդային Հայաստան», «Ավանգարդ», «Մարտակոչ», «Известия ВЦИК», եղած հրապարակումները: Այդպիսիք են պետական և կուսակցական վերահսկողության մարմինների կանոնադրությունները, Բոլոքների բյուրոյին նպատակների և գործունեության մասին հաղորդումները, պետական և կուսակցական վերահսկողության մարմինների կատարած ստուգումների, օժանդակ մարմինների մասին տեղեկությունները և այլն:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացություններից, սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է համակարգչային շարվածքի 169 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, ներկայացվում են հեղինակի առջև դրված նպատակներն ու խնդիրները, թեմայի ժամանակագրական ընդգրկումը, կիրառված մեթոդները, գործնական նշանակությունը, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՏՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ», կազմված է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է «Վերահսկողության մարմինների ձևավորման հայեցակարգային մոտեցումները և կազմակերպական միջոցառումները Խորհրդային Ռուսաստանում 1917-1922 թթ.», ներկայացվում է Խորհրդային Ռուսաստանում Հոկտեմբերյան

²⁷Տե՛ս Абаджян А., Деятельность ЦКК-РКИ Армении (1924-1933), «Լրաբեր հայրակական գիտությունների» ամսագիր, N 1, Երևան, 1989; Ասձատրյան Ե., Վերահսկողության օրգանների հայրենասիրական գործունեությունը, «Լենինյան ուղիով» ամսագիր, N 3, Երևան, 1968; Троцкий Л., О рабочем контроле над производством, <http://magister.msk.ru/library/trotsky/trotm306.htm>, 14.01.2019; նույնի, Открытое письмо большевикам-ленинцам (оппозиционерам), подписавшим заявление в ЦК и ЦКК тов. В. Кассиора, М. Окуджава и Х. Раковского, <http://magister.msk.ru/library/trotsky/trotm255.htm>, 14.01.2019:

հեղաշրջումից հետո ձևավորված վերահսկողության համակարգը: Նախ քննարկել ենք բանվորական վերահսկողության՝ որպես վերահսկողության համակարգի առաջին, «հեշտ կիրառելի», բայց և «թերի» քայլի, ձևավորման հանգամանքները: Քննարկել ենք նրա առջև դրված պարզ, սակայն խորհրդային համակարգի ամրապնդման գործում կարևոր խնդիրները: Այնուհետև ներկայացրել ենք պետական վերահսկողության ձևավորման հանգամանքները: Ուսումնասիրել ենք պետական վերահսկողության նպատակներն ու խնդիրները, նրա լիազորությունների աստիճանական ընդարձակման գործընթացը, բանվորական վերահսկողությունը վերացնելու և պետականին միացնելու հարցը և այլն: Վերջում ներկայացրել ենք կուսակցական վերահսկողության ձևավորման գործընթացը և նրա առջև դրված խնդիրները:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Վերահսկողության կենտրոնական մարմինների ձևավորումը և վերակազմակերպումները ՀՍԽՀ-ում 1921-1924 թթ.»**, ներկայացվում է պետական վերահսկողության մարմնի՝ Բանվորա-գյուղացիական տեսչության ժողովրդական կոմիսարիատի կազմավորումը: 1921 թ. հունվարի 4-ին Հայաստանի հեղափոխական կոմիտեն ընդունում է դեկրետ, որով Հայաստանի առաջին հանրապետության պետական վերահսկողության հանձնաժողովի հիմքի վրա ձևավորվում է Բանվորա-գյուղացիական տեսչությունը, որին տրվում են ավելի ընդարձակ լիազորություններ: Վերջինն աստիճանաբար ենթարկվում է կառուցվածքային փոփոխությունների և համապատասխանեցվում տիրող վարչակարգի պայմաններին: 1921 թ. փետրվարի 2-ին ձևավորվում է Բողոքների բյուրոն, որն ընդունում և քննում է կառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ բնակչության ունեցած դժգոհությունները: Բանգյուղտեսչության կազմակերպական գործընթացն ամբողջանում է 1922 թ. կեսերին, երբ ընդունվում է ԲԳՏ կանոնադրությունը: Ներկայացվում են նաև կուսակցական վերահսկողության մարմնի՝ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի ձևավորման ընթացքը և նրա առջև դրված նպատակներն ու խնդիրները:

Այնուհետև քննարկվում են պետական և կուսակցական վերահսկողության մարմինների կազմակերպարարական ձևերի փոփոխությունները, որոնք հանգեցնում են պետական և կուսակցական վերահսկողության մարմինների միավորմանը: Ձևավորվում է ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատը, որը նպաստում է ԿՎՀ լիազորությունների ընդարձակմանը:

Երրորդ ենթագլխում՝ «Վերահսկողության մարմինների գործունեությունը Խորհրդային Հայաստանում 1921-1924 թթ.», ներկայացվում են 1921-1924 թթ. ընթացքում վերահսկողության մարմինների կատարած ստուգման ու վերահսկման աշխատանքները:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԿՎՀ-ԲԳՏ ԺՈՂԿՈՄԱՏԸ 1925-1934 ԹԹ.»,
կազմված է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «ԿՎՀ-ԲԳՏ Ժողկոմատի կազմակերպակառուցվածքային փոփոխությունները և նոր ենթակառուցվածքների ստեղծումը», ներկայացրել ենք ժողկոմատի կազմակերպական ամբողջականության հաստատման ուղղությամբ կատարված քայլերը, ԲԳՏ կառուցվածքում կատարված փոփոխությունները, ԿՎՀ-ԲԳՏ ժողկոմատին կից մասնագիտացված նոր ենթակառուցվածքների ստեղծումը, բարձրագույն և վերադաս մարմինների որոշումների կատարման վերահսկողությունը, վերահսկողության գործընթացում բազմակիության վերացումը, ԿՎՀ-ԲԳՏ-ի ժողկոմատի գործունեության դադարեցումը:

Երկրորդ ենթագլխում՝ «ԿՎՀ-ԲԳՏ Ժողկոմատի գործունեությունը», ներկայացնում ենք 1925-1934 թթ. ընթացքում ԿՎՀ-ԲԳՏ իրականացրած ստուգման և վերահսկման աշխատանքները:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՈՒՄԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 1921-1934 ԹԹ.», կազմված է երկու ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Վերահսկողության մարմինների տեղական ներկայացուցչությունները Խորհրդային Հայաստանում», ներկայացվում են 1921 թ. պետական և կուսակցական վերահսկողության մարմինների տեղական ներկայացուցչությունների կազմավորումը, նրանց լիազարությունները, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև 1923 թ. նրանց վերացումը: Ներկայացրել ենք նաև 1929 թ. գավառային ՎՀ-ԲԳՏ-ների, ապա շրջանային ՎՀ-ԲԳՏ-ների կազմավորումը:

Երկրորդ ենթագլխում՝ «ԿՎՀ-ի և ԲԳՏ-ի գործունեությանը օժանդակող մարմինները», ներկայացրել ենք օժանդակող մարմինների կազմավորումը, նրանց նպատակներն ու դերը, գործունեության շրջանակները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ամփոփված են ատենախոսության ընդհանուր դրույթներն ու մեր կողմից արված եզրահանգումները:

Այսպիսով՝ ամփոփելով կատարված ուսումնասիրությունը՝ հանգում ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ռուսաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո քայլեր են կատարվել վերահսկողության համակարգի ձևավորման ուղղությամբ: Որպես վերահսկողության համակարգի ձևավորման առաջին քայլ է ընտրվում բանվորական վերահսկողության հաստատումը: Վերջինի առջև դրվում են պարզ, սակայն նոր կարգերի հաստատման համար խիստ կարևոր երկու խնդիրներ՝ հետևել պետությունում առկա նյութական միջոցների պահպանմանը և ապահովել արտադրության շարունակականությունը:

Բանվորական վերահսկողության հռչակմամբ խորհրդային վարչակարգը իր կողմն է գրավում բնակչության մեծ մասին:

2. Գիտակցելով լուրջ վերահսկողական գործառույթներ կատարելու գործում բանվորական վերահսկողության անկարողությունը՝ խորհրդային վարչակարգը և նրա առաջնորդ Վ. Լենինը նախաձեռնել են պետական վերահսկողության կազմավորումը: Աստիճանաբար տեղի է ունենում վերջինի լիազորությունների ընդարձակում, որը նպատակ ուներ ստեղծելու մի այնպիսի մարմին, որի վերահսկողական իրավունքները «ոչ մի բանում չսահմանափակվեն»: Պետական վերահսկողությանը տրվել են նաև կառավարությանը բնորոշ լիազորություններ՝ հետևել մյուս բոլոր ժողկոմատների գործունեության օրինականությանը և նպատակահարմարությանը, ինչպես նաև տալ անհրաժեշտ հրահանգներ աշխատանքների ճիշտ կազմակերպման համար: 1920 թ. սկզբին պետական վերահսկողությանն է միացվում բանվորական վերահսկողությունը: Այսպես վերացվում է բանվորական վերահսկողությունը. այդուհետև գործելու էր պետական վերահսկողությունը՝ ժողովրդական լայն զանգվածներին իր աշխատանքներում ներգրավելու սկզբունքով: Վերահսկողության բանվորական բնույթի կեղծ տպավորություն ստեղծելու նպատակով պետական վերահսկողությանն է փոխանցվում բանվորական վերահսկողության անվանումը:

3. 1920 թ. նախաձեռնվում է ՌԿ(բ)Կ վերահսկիչ մարմնի՝ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի կազմավորումը: Այն պայքարում է կուսակցական միասնականության, կուսակցության շարքերից խմբակայնության վերացման համար: Միաժամանակ կարևոր դեր է ունենում կուսակցության գերակայող-միապետական դիրքերի հաստատման և ամրապնդման գործում, նպաստում է բոլոր ոլորտներում կուսակցական գծի տարածմանն ու անշեղ գործադրմանը:

4. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից անմիջապես հետո ձևավորվեցին վերահսկողության մարմինները: Ի տարբերություն խորհրդային Ռուսաստանի խորհրդային Հայաստանում բանվորական վերահսկողության մարմիններ չեն ձևավորվում, այլ միանգամից կազմավորվում է պետական վերահսկողության ժողկոմատը՝ Բանվորա-գյուղացիական տեսչությունը: Վերջինը կազմավորվում է Հայաստանի առաջին հանրապետության պետական վերահսկողության հանձնաժողովի հիմքի վրա՝ պահպանելով նույն կառուցվածքը, ստանալով ավելի ընդարձակ լիազորություններ: Աստիճանաբար տեղի են ունենում նաև կառուցվածքային արմատական փոփոխություններ: Խորհրդային Հայաստանում պետական վերահսկողության ժողկոմատը ևս ուներ բացարձակ լիազորություններ՝ վերահսկելու էր պետության բոլոր ոլորտները, բոլոր կառույցների ու կազմակերպությունների գործունեությունը, կարող էր մուտք գործել ցանկացած վայր, պահանջել ցանկացած փաստաթուղթ:

1921 թ. կեսերին կազմավորվում է նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության վերահսկողության մարմինը՝ Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովը:

5. Վերահսկողության մարմինները կարևոր դերակատարում են ունենում խորհրդային կարգերի հաստատման ու ամրապնդման գործում: Նրանք ապահովում են կառավարման բարձրագույն մարմինների կողմից գծված գործունեության շրջանակների հնարավորինս անշեղ գործադրումը: Այս հանգամանքը հատկապես կարևոր էր խորհրդայնացմանը հաջորդած առաջին տարիներին, երբ համապատասխան կադրերի բացակայության պատճառով պաշտոնները շարունակում էին զբաղեցնել նախկին համակարգում պաշտոնավարած նույն անձինք, որոնք վստահելի չէին նոր վարչակարգի համար: Վերահսկողության մարմինները հետևում էին, որ այդ պաշտոնյաները գործեն նոր վարչակարգի պահանջներին համապատասխան՝ չձեղվելով գծված շրջանակներից: Կարևոր հանգամանք էր նաև այն, որ վերահսկողության մարմինները կառավարման նոր մոտեցումները տարածում էին ժողովրդի մեջ և դարձնում նրանց կողմից ընդունելի:

6. Վերահսկողության գործում կարևոր դեր է ունեցել Բողոքների բյուրոն, որի միջոցով լսվում էին կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ ժողովրդական զանգվածների մեջ գոյություն ունեցող դժգոհությունները: Այս գործոնը հանդիսացել է կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կամայական գործողությունները զսպող միջոց: Միաժամանակ բացահայտվում էր կիրառվող պետական այս կամ այն քաղաքականության նկատմամբ ժողովրդի վերաբերմունքը, ինչը, զուգակցվելով անցկացված ստուգումների արդյունքների ամփոփման հետ, հնարավորություն էր տալիս կազմելու տարբեր ոլորտներում տիրող իրադրության պատկերը:

7. Նշանակալի կապ է գոյություն ունեցել կենսագործվող տնտեսական քաղաքականությունների և վերահսկողության մարմինների առջև դրվող խնդիրների միջև: Այդ խնդիրները բխում էին «Ռազմական կոմունիզմի», ՆԷՊ-ի, ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականություններից և նպատակ ունեին ապահովելու դրանց՝ սահմանված ձևով ու ժամկետներում գործադրումը:

8. 1924 թ. կատարված ԿՎՀ և ԲԳՏ միավորմամբ տեղի է ունենում կուսակցական վերահսկողության մարմնի լիազորությունների ընդարձակում: Այն դադարում է զուտ կուսակցական վերահսկողության մարմին լինելուց և անուղղակի կերպով՝ ԲԳՏ իրականացրած ստուգումների քննարկման միջոցով, վերահսկողություն է սահմանում պետության բոլոր ոլորտների վրա: Միավորումն առաջացնում է ձևաբովանդակային հակասություն: Ձևական առումով ԿՎՀ-ԲԳՏ-ն համարվում է միասնական ժողովմատ և բնականաբար պետք է ենթարկվեր ու հաշվետու լիներ ժողկոմխորհին: Սակայն ԿՎՀ-ն երբեք հաշվետվություն չի ներկայացրել ժողկոմխորհին: Վերջինը միշտ լսել է միայն

ԲԳՏ գործունեության մասին հաշվետվությունը: Ավելին՝ ԲԳՏ-ն հաշվետվություն պետք է ներկայացնեի ԿՎՀ-ին, ԲԳՏ կառուցվածքային փոփոխությունները, աշխատանքային պլանները պետք է քննարկվեին նաև ԿՎՀ-ում: Այսինքն՝ Բանվորա-գյուղացիական տեսչությունը դրվել է նաև Կենտրոնական վերահսկիչ հանձնաժողովի ենթակայության ներքո՝ հաստատելով կուսակցական վերահսկողության հսկողություն պետականի նկատմամբ:

9. Պետական և կուսակցական վերահսկողության մարմիններն առնդիատ ենթարկվել են կազմակերպա-կառուցվածքային փոփոխությունների՝ պայմանավորված իրենց առջև դրվող խնդիրներով և համապետական փոփոխություններով: Վերստուգման աշխատանքների իրականացումը բարելավելու գործում կարևոր դեր ունեցավ նոր ենթակառուցվածքների՝ մասնագետների ակտիվ, տեսչական խորհրդակցություն, գների տեսչություն և այլն, ստեղծումը: Այդ ենթակառուցվածքները նպաստեցին վերահսկողության մարմինների գործունեության այս կամ այն կողմի բարելավմանը:

10. Վերահսկողության մարմինները կարևոր նպաստ ունեցան օրինականության հաստատման գործում: Նրանք վերահսկում էին կառավարման բարձրագույն և վերադաս մարմինների ընդունած իրավական ակտերի՝ ժամանակին և ճշգրիտ կատարումը: Այդ նպատակով կատարվել են համապատասխան ստուգումներ պետական տարբեր կառույցներում, կազմակերպվել են նոր օղակներ կատարման ստուգումն ապահովելու համար: Այս ուղղությամբ կատարված աշխատանքները հնարավորություն էին ստեղծում չարաշահումների կանխարգելման, կատարված չարաշահումների բացահայտման ու վերացման համար:

11. Պետական և կուսակցական վերահսկողության մարմինները կարևոր նպաստ ունեցան նաև կառավարման կարողություններ ունեցող անձանց պատրաստման և սերնդափոխության կատարման գործում: Այդ մարմինների կատարած ստուգումներին մասնակից դառնալով՝ քաղաքացին ծանոթանում էր տվյալ կազմակերպության ընդհանուր գործունեությանը, առանձին գործերի բնույթին, կառավարման ընդունելի սկզբունքներին և ձեռք էր բերում գիտելիքներ ու հմտություններ: Բացի ստուգման աշխատանքներին մասնակցելուց՝ աշխատավորները պետական կառավարման համակարգին կարող էին ծանոթանալ հատուկ այդ նպատակով կազմակերպություններում անցկացվող պրակտիկաների միջոցով: Վերահսկողության մարմիններն իրենց հերթին ապահովում էին աշխատանքային ներուժով աչքի ընկած անձանց առաջընթացը:

12. Պետական վերահսկողության ժողովմատն իր գործունեությունը սկսեց պետության նյութական արժեքների հաշվառման ու պահպանման պարզ, սակայն կարևոր աշխատանքից և հասավ պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ոլորտների ուսումնասիրման, պետական կառավարման համակարգի բարելավման աշխատանքների կատարմանը: Այս ընթացքում

ստուգման և ուսումնասիրման աշխատանքներ իրականացվեցին պետության բոլոր ոլորտներում, հիմնարկություններում, ձեռնարկություններում՝ հաստատելով ամբողջական վերահսկելիության մթնոլորտ: Պետական կառավարման համակարգի բարելավման ուղղությամբ կատարվող աշխատանքները ԲԳՏ-ն սկսեց պետական մարմինների գոյության անհրաժեշտության և նրանց հաստիքների հստակեցումից, օժանդակեց խնայողության ռեժիմի կիրառմանը, իսկ իր գործունեության վերջին շրջանում անցկացրեց «գտման» աշխատանքներ՝ պետական մարմիններից հեռացնելով խորհրդային համակարգի համար անհուսալի անձանց:

13. Վերահսկողական աշխատանքներում ոչ պատասխանատու պաշտոններ զբաղեցնող աշխատողների պարտադիր ներգրավման սկզբունքը ունենում է առանցքային նշանակություն: Նախ այդ աշխատողները, ծանոթ լինելով տվյալ կազմակերպության «ներքին խոհանոցին», կարող էին առաջադրել հարցեր և տալ տեղեկություններ, որոնք կնպաստեին համակողմանի ու թիրախային ստուգումների իրականացմանը: Մյուս կողմից ստուգումներին մասնակցած աշխատավորների՝ կազմակերպության ամբողջական գործունեության մասին տեղեկացվածությունը դառնում է ղեկավար անձանց գործողությունները զսպող, չարաշահումները կանխարգելող արդյունավետ օղակ:

14. Վերահսկողության մարմինների գործունեության մեջ կարևոր տեղ էր հատկացվում տեղական ներկայացուցչությունների և օժանդակող մարմինների գործունեությանը: Նրանք ընդգրկում էին հազարավոր մարդկանց՝ նրանց դարձնելով վերահսկողական աշխատանքների մասնակից: Այս հանգամանքը, համատեղվելով վերը նշված մի շարք գործոնների հետ, հնարավորություն էր տալիս վերահսկողությունը դարձնելու համաժողովրդական իրավունք և պարտականություն:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Փաստաթղթեր Բանվորա-գյուղացիական տեսչության սեկցիաների կազմակերպման, դրանց խնդիրների ու նպատակների մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 125, Երևան, 2017, էջ 198-219:
2. Պետական և կուսակցական վերահսկողության մարմինների վերակազմակերպումը ՀՍԽՀ-ում (1922-1924 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 2, Երևան, 2018, էջ 117-128:
3. Կատարման ստուգումը և զուգահեռականության վերացումը որպես վերահսկողական աշխատանքների առաջնահերթություններ, «Կանթեղ», N 3 (76), Երևան, 2018, էջ 80-90:

4. Կուսակցական եվ պետական վերահսկողության մարմինների ձևավորման հայեցակարգային մոտեցումները ու կազմակերպական միջոցառումները Խորհրդային Ռուսաստանում 1917-1922 թթ., «Բանբեր Հայաստանի արխիվների», N 126, Երևան, 2018, էջ 235-250:
5. Պետա-կուսակցական վերահսկողության մարմնի կազմակերպակառուցվածքային փոփոխությունները և նոր ենթակառուցվածքների ստեղծումը 1925-1934 թթ., «Պատմություն և մշակույթ», Երևան, 2018, էջ 150-158:
6. Պետական-կուսակցական վերահսկողության ժողովրդական կոմիսարիատի գործունեությանն օժանդակող մարմինները 1928-1934 թթ., «Կանթեղ», N 4 (77), Երևան, 2018, էջ 139-149:

КЕСОЯН ГЕВОРГ ЭДУАРДОВИЧ

ОРГАНЫ ГОСУДАРСТВЕННО-ПАРТИЙНОГО КОНТРОЛЯ В
ПРАВИТЕЛЬСТВЕННОЙ СИСТЕМЕ В 1921-1934 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”.

Защита состоится 18-го июня 2019 г., в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА, по адресу: 0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4.

РЕЗЮМЕ

В период независимости была сделана первая и главная попытка, с использованием множества новых исходных материалов и сохранением научных принципов, исследовать деятельность органов государственного и партийного контроля в 1921-1934 гг., а именно, определить их место в системе государственной власти, цели, задачи, направления деятельности и причинно-следственную связь структурных изменений.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованных источников и литературы.

Во введении основное внимание было уделено научной значимости и актуальности темы, целям и задачам, хронологическому периоду темы, использованным методам, практической значимости, основам исследовательских источников и уровню исследований.

Первая глава: «Формирование органов государственного и партийного контроля в Советской России и Советской Армении» состоит из трех подразделов. В первой части исследуется формирование системы управления в Советской России. Сначала был обсужден рабочий контроль, как первый, «простой в применении», однако «недостаточный» поэтапный фактор формирования системы управления и стоящие перед ним простые, но очень важные вопросы в деле создания советской системы. Затем представлены обстоятельства, цели и задачи формирования государственного контроля, постепенное расширение его полномочий, вопросы устранения рабочего контроля и присоединения его к государственному и др. В конце представлен процесс формирования партийного контроля и стоящие перед ним задачи.

В следующей части исследуется формирование народного комиссариата Рабоче-крестьянской инспекции ССР Армении. 4 января 1921г. Революционным комитетом Армении был принят декрет об учреждении Рабоче-крестьянской инспекции, которой были предоставлены широкие полномочия. Процесс формирования Рабоче-крестьянской инспекции становится целостным в половине 1922г., когда уже был принят устав РКИ. Наряду с исследованием государственного контроля, был изучен процесс формирования Комиссии центрального контроля КП(б)А и стоящие перед ним задачи и цели. Затем были рассмотрены изменения в организационно-правовых формах органов государственного и партийного контроля, приведшие к их объединению. Был сформирован народный комиссариат ЦКК-РКИ.

В конце представлены работы по контролю и проверке контролируемых органов за 1921-1924 гг.

Вторая глава «Народный комиссариат ЦКК-РКИ 1925-1934гг.» состоит из двух подразделов. В первой части были рассмотрены шаги, предпринятые для установления организационной целостности народного комиссариата, создания новой специализированной инфраструктуры при ЦКК-РКИ, контроль

за выполнением решений вышестоящих и высших органов власти, отменамногократности в процессе контроляи прекращение деятельности Наркома ЦКК–РКИ.

В следующей части представлены проделанные работы по проверке и контролю ЦКК–РКИ за 1925-1934гг.

Третья глава“Местные представители и вспомогательные отделения органов государственного и партийного контроля ССРА за 1921-1934гг.” состоит из двух подразделов. Вначале рассматривается формирование местных представительств органов государственного и партийного контроля в 1921 году, их полномочия, цели и задачи, а также процесс их ликвидации и реорганизации.

Было также рассмотрено формирование вспомогательных органов, их роль, цели и задачи, а также сфера деятельности.

В заключении обобщены основные положения диссертации и сделанные нами выводы.

KESOYAN GEVORG EDUARD

STATE-PARTY CONTROL BODIES IN THE GOVERNMENTAL SYSTEM OF ASSR
IN 1921-1934

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of “History of Armenia” 07.00.01.

The defense of the dissertation will be held on June 18, 2019, at 14⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

Since the independence of Armenia, it has been the first attempt to conduct a comprehensive research on the activities of state and party control bodies from 1921

to 1934 with an aim to dig out their role, objectives in the state governmental system, the goals they pursued, the areas of activity and the cause-effect linkage of structural changes by using numerous novel firsthand sources and maintaining the scientific principles.

The thesis consists of an introduction, three chapters, conclusions and a list of used sources and literature.

The introduction focuses on the scientific significance and relevance of the topic, goals and objectives, scope of the topic, used methods, practical relevance, the basis of scientific sources of the research and the extent to which it has been researched so far.

The first chapter, "The Formation of State and Party Control Bodies in Soviet Russia and Soviet Armenia" consists of three sub-chapters. In the first part of the chapter the formation of State Control in Soviet Russia is analyzed. First of all the circumstances of the formation of the worker control as a first, "easy-to-use," but a "defective" step in the control system are discussed; these were simple but essential issues for the establishment of the Soviet system. Then we presented the circumstances, goals and objectives of the formation of state control, the gradual expansion of its powers, the elimination of and the inclusion of labor control to state control. In the end, we presented the process of formation of party control and its tasks.

The next section discusses the formation of the People's Commissariat of the Worker-Peasant Inspectorate of Armenian Socialist Soviet Republic. On January 4, 1921, The Revolutionary Committee of Armenia adopted a decree on the establishment of the Worker-Peasant Inspectorate, which had broad power. The organizational process of the Worker-Peasant Inspectorate was completed in 1922, when the charter of the WPI was adopted. Together with the state Control Bodies, we also studied the process of formation of the Central Observatory Committee of the Bolshevik Communist Party of Armenia, and its goals and objectives. Then we discussed changes in the organizational and legal forms of state and party control bodies that led to the unification of state and party control bodies. The Central Control Committee CCC- WPI commissariat is formed.

At the end of the chapter the inspection and supervision activities of the control bodies in 1921-1924 are presented.

The second chapter, "The National Commissariat of the CCC-WPI in 1925-1934" consists of two subchapter. In the first part, we discuss the steps taken to establish the organizational integrity of the National Assembly, the formation of the new specialized infrastructure adjacent to the CCC-WPI, the control of the implementation of decisions of higher authorities, elimination of multiple in the process of control and the termination of the CCC-WPI Commissariat.

In the next section, we present the inspection and supervision activities of the CCC-WPI Commissariat in 1921-1924.

The third chapter, “Local Representatives and Auxiliary bodies of the State and Party Control Bodies of the Armenian Socialist Soviet Republic in 1921–1934” consists of two subchapter. In the beginning the formation of local Representatives of state and party control bodies in 1921., their authorities, goals and objectives, as well as the process of their liquidation and reorganization are discussed. We also examined the formation of Auxiliary bodies, their role, goals and objectives, the scope of their activities.

The conclusions of the presented dissertation summarize the main provisions of the thesis and our inferences.